

Թիւ 27267  
Ապրիւ 10, 1981

Արժանաշնորհ

Տ. Առնակ Քհնյ. Գասպարեան  
Հովհիւ Ս. Թովմաս Եկեղեցւոյ  
Նախագահ ծխական Խորհուրդի  
Թէնէֆլայ.

Սիրիւի Տէր Առնակ,

Ստացած ենք համայնքիդ տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր  
Նախագահութեամբ Փետրուար 8ին գումարուած ծխական ժողովին մէջ կա-  
տարուած է ծխական Խորհուրդի վեց անդամոց ընտրութիւնը, եւ ներ-  
կայացնելով բուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու  
վաւերացման պաշտօնագիրը:

Այսու զիրով կը վաւերացնենք ծխական Խորհուրդի նորընտիր անա-  
դամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հանեցէք փութով Սուաջնորդարան ղրկել ծխական Խորհուրդի նորընտիր  
Դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռածայնի թիւերը:

Օրհնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, ձեզի եւ ձեր պաշտօնակից-  
ներուն կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր զործունէութեան աարի մը, ի  
պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր  
սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Սուաջնորդ

Արա Պապիկեան  
Պետրոս Ժամկոչեան  
Ալգերթ Չափագեան  
Վրճինիա Բարսեղեան  
Գրէնք Սթօնսըն Աւագեան  
Հայկ Վարժեան